45. ՏԵՍՔՈՎ ՔՈՒՐՆ ՈՒ ԱԽԲԵՐ

Կէղնին էրիկըմ ու կնիկըմ, էդոնց լե էրկու ճիժ, տղե մը ու ախչիկըմ։

Հերն ու մեր կընկնեն կմեռնեն, կմնան քուրն ու ախբեր միանակ, էդ էրկուս լե շատ տեսքով կէղնին։

Քուրն կասե ախբոր.— Կարգվի։

Ախբերն կասե.— Հար քու նման չգտնամ, չըմ կարգվի։

Քուր լե կասե.— Մատամ օր հըմալ է, ես լե հար քու պես չգտնամ, չկարգվիմ։

Կընցնի ժոմըմ. քուր կէլնի կէրթա բաղնեկ, ախչիկըմ կտեսնա, օր ուր սուրաթն ու ընդոր մեկ է, կիգա ախբոր կասե.— Ախբեր, իմ պես ախչիկըմ գտեր իմ, զքզի կկարգիմ։

Ախբերն կասե.— Կկարգիս՝ կարգե։

Կհ՝ելնի կէրթա, զէդ ախչիկ կուզե, կառնե կիգա։

Ախբերն օր կարգվավ խըլըսավ, տեսավ, ուր պես տեսքով մեկըմ հ՝ռաստ չէկավ, օր զքուր իտեր, հ՝ելավ խահվախանե մը բացեց, ասեց. «Խահվախանե էրթացող-գալացող շատ կէղնի, բալքիմ իմ պես մեկըմ գտնամ, գիմ քուր իտամ»։

Ավուր մեկըմ տեսավ, օր պեխեր նոր է մրի, թոսուն տղե մը փրթավ էկավ, ուրեն էղավ մսաֆըր։ Էդ տղեն օր էկավ, խահվաճին էլ տուն չգնաց հ՝էնօր։ Քուրն հ՝ընկավ մարախի մեջ. «Հ՝աճեպ հ՝էսօր ի՞նչ էղավ, օր իմ ախբեր չէկավ, գիս տեսավ, հել օր իրեք հեզ իմ սիրուն տուն կլըմբերն»։

Խահվաճին օր զէդ տղեն տեսավ, ասեց. «Էդրա սուրաթն ու իմ մեկ է, զիմ քուր կիտամ էդոր»։ Էդոր հ'ապով տուն չէր գացի։

Հ'իրկուն տղեն դառցավ էկավ տուն։ Կնիկն հարցուց, ասեց.—Հ'էսօր ի՞նչ էր էղի քզիկ, օր իսկի տուն չէկար, հել հեղ օրական իրեք անգամ կիգեր, իշքեր զքու քուր ու կղառներ, կէրթեր։

Տղեն ասեց.— Հ'էսօր ընծիկ մսաֆրը մ' էր Ղկի, հ'ընկա հետ, չէկա։

Քուրն շրկի գնաց, ասեց՝ իմ ախբեր ընծիկ մարդ է գտի։

Ախչիկ լսեց զախբորն ու զախբորկնկա ասածները, կանչեց ասեց.— Ես էլ չըմ կառնա համբերի, ընծիկ ճարըմ գտի, էրթամ խահվախանեն ու հ'իգամ։

Ախբերն կանչեց լըղմ բացող, ասեց.—Քանի՞ օսկի կուզիս էդա գիշեր լըղըմ բանաս մըր տնեն ֆլան մարդու խահվախանի տակ։

Լըղմըճին ասեց, թե տաս, թե քսան։ Հանեց ախբըրկին տվեց։ Լըղմըճին մեկ սահաթվա մեջ դեղնի տրկին լընըղմ թալեց, տարավ կնկա հ'ուզած խահվի դուռ, հանեց դուրս։ Օր հանեց դուրս, էկավ, ասեց՝ թալի, ու գնաց։

Լըղմըճին գնաց, ախբըրկին բերեց աղեկ ձեռքըմ շոր հագուց տալոջ, լըղմի միջով գնաց ուր ախբոր խահվեն, հ'ելավ դուրս։

Տղեն օր զաչք կրանա, կտեսնա հուրնեկ-հրեղեն մը ուր գլխի վրեն նստուկ է։

— Ցա՜, Հիսուս Քրիստոս, դու ի՞նս իս, ճի՞նս իս, ի՞նչ իս։

Ախչիկն կասե.—Նը ինս իմ, նը ճինս իմ, ես քըզի, դու ընձի։

Տղեն կասե.— Մատամ օր դու հըմալ կասես, թըղ էղնի։

Կդրկեն զիրար ու կպառկեն քնեն։

Առտվան դեմ տղեն կքնի, քուն կընցնի վրեն ուրախութենեն. էդ էր օր հ'ընկավ ուր ձեռք, ախչիկ կէլնի կէրթա։

Ախբեր լուսուն կիգա, կտեսնա օր էդ տզի մրուութներ թիզըմ կախուկ է, նյաթն էրուկ։ Կասի.— Ախբեր, զքու նյաթն հ'որի՞ն իս կախի։

Տղեն կասի.—Իմա՞լ չկախիմ, հ'էսօր գիշեր էդա տեխ քնուկ ենք, դոներ փակուկ, մեկ լե տեսնամ հուրնի-հրեղեն ախչիկըմ գլխուս վերև նստուկ, ասի՝ դու ի՞նս իս, ճի՞նս իս։ Ասեց՝ ես ընծի, դու քզի, նը ինս իմ, նը ճինս իմ։ Պառկանք, զմըր քեֆ էրինք, քուն օր հ'ընցավ վրես, հ'ելեր էր, գացի։

Խահվաճին կկասկածե, մտկով կասե. «Ցա՜ իմ կնիկն է, յա՜ իմ քուրն է, ես էնդոնց իմ էրի խրսա, թը չէ՝ էլ ո՞ր գինա, էդ տղեն հ'ոդա է»։

Կէլնի կիգա շուկեն, կտեսնա օր էրկու քուռք կծախեն, կգնե կբերե, մեկ՝ քուրոջ, մեկ՝ կնկան ու կդառնա կիգա խահվախանեն, կասե տղին.— Տղա, էն օր էկեր է գիշեր քու խեչ, հ'էսօր լե կիգա, էկո հ'էսօր գիշեր

մանցի, որ էկավ, առ ու քզիկ ֆընջանըմ, սատա խահվա, հաըըր կպահիս, կթափիս էնդոր հալվըններու վրեն։

Ախչիկն է, որ հ՚իրկուն էղավ, ախբերն էկավ տուն, պառկան քնան, հագավ-քոքվորավ, մտավ լըզմի միջով, գնաց տղի մոտ, տղեն բաքլամիշ կէներ։

Գացին, գըրկեցին զիրար ու պառկան, զուրանց քեֆ էրին, տղեն գողտվտիկ զֆընջան խահվեն լցեց ախչկա քըռքի փեշեն։ Էմ լե կես գիշեր որ էղավ, քուն հ՚ընցավ տղի վրեն, ախչիկ չէ՞ զուր քեֆ հ՚իջուցեր էր, հ՚ելավ էկավ տուն։ Էկավ տուն, առտվանց հավար թալեց ախբըրկան, ասեց.— Տեսա՞ր էդ շանորթին ինչ էրեց։ Ֆընջանըմ խահվա լցեր է իմ քըռքի փեշին, էղեր է լաքա։

Ախբըրկին ասեց.— Ջանըմ, դու անհոգ էղիր։

Կանչեց զմշակ, ճամբեց հոր տուն։ Ասեց.— Գնա ասե՝ ձըր ախչիկ զֆըլան քուռք կուզե, այնան տալոջ հագած քըռքի պես քուռքըմ։

Ճամբեց, առավ էկավ, բերեց կախեց պատեն։

Տղեն առտըվանց հ՚ելավ գնաց խահվեն, ասեց.— Է, ախբեր, հ՚էսօր լե քզիկ բան պատահավ, թե՝ չէ։

Տղեն պատմեց.— Հա, վալլահի, հ՚էրեկվան պես հուրնի-հրեղեն ախչիկ մը էկավ, գրկեցինք զիրար ու պառկանք։

— Դու զէն մ՚ ասի, վրեն ի՞նչ կեր։

Տղեն ասեց.— Խընավուզ քուռքըմ կեր, ես լե վերցի ֆընջանըմ սատա խահվա լըցի վրեն։

Տղեն դառցավ էկավ տուն, կընչփընչա, հերստեր է, ասեց.— Էդ ի՞նչ խայտա է, ես ձըզիկ քուռք առեր եմ, որ հագնեք, էրթաք մըշ տախտին հ՚իգաք, չըմ առեր է, որ տանեք դնեք չաքմաճեն, իշքեք վրեն։

Կնիկն ասեց.— Հըմլա բանի մեջ ենք, չհագանք. խըլըսենք, կհագնենք։

Հերստավ վըր ուրանց, գացին բերին, հագան։ Տղեն տեսավ, որ նը կնկա քըռքի վրեն կա լաքա, նը քուրոշ. հ՚ելավ էկավ շուկեն։ Էկավ շուկեն, տեսավ որ ջուխտըմ սաչլուզ կա թալալի ձեռք, կծախե, մեկն առավ քուրոջ, մեկ լե կնկան։

Առավ, էկավ տուն, ասեց.— Առեք, դրեք ձըր գլխըներ։

Դառցավ էկավ խահվախանեն, ասեց տղին.— Դու հարա՞մն ես կերի, չըս կըռնա բըռնի, հանդե էնի էդա գիշեր վե կիգա քու խեչ, դու փաթե զէնդոր ծամեր քու ձեռքի վրեն ու պառկի, քնի. որ հ՚ելավ գնաց, կիմնաս, չըս թողի էրթա։

Հ՚իրկուն օր ախբեր դառցավ էկավ տուն, կերան հաց ու պառկան,

քնան, ախչիկ մեկ լե հագվավ, խրփվավ, դրեց զծամ թելն գլուխն ու գնաց։

Գացին մեկ լե ուրանց քեֆ ուրախութեն էրին, պառկան, քնան։

Օր կքնեն, տղեն ուրախցավ վըր ախչկան, բերեց զծամեր փաթեց վըր բըլակին ու պառկան քնան։

Կես գիշեր օր էղավ, քուն հ'ընցավ տղի վրեն, ախչիկ հ'ելավ կիգեր, էրեց օր զծամեր քակեր, չկառցավ քաշեր, տղեն կզարթեր։ Թալեց զչախուն, զծամթել կտրեց, մնաց տղի ձեռաց մեշ ու հ'ելավ էկավ։

Շատ հոգ էր էրի, ուրեն ասլընի պես ախբըրկի կեր կանուկ։

Էկավ տուն, մեկ լե հավար թալեց ախբըրկան, ասեց.— Դու տեսա՞ր, էդ շան տղեն ի՞նչ էրեց, զծամերս փաթեց վըր ձեռաց, պառկավ քնավ, էն գահ օր հ'ելա, կիգենք, չկրռցա քակենք, թալեցի զչախուն, կտրի, հ'ելա էկա։

Ասեց.— Անհոգ էղիր, հըմկա կղրկեմ, բերեմ։

Ճամբեց զմշակ, տվեց զուր սաչլուղներ լե, հետ դառցավ, ասեց.— Գնա իմ հոր տուն, ասե՝ ձեր ախչիկ զէդրա թայ սաչլուղ կուզե։

Առավ ու էկավ։

Ախբերն հ'ելավ քնուց, գնաց խահվախանեն, հարցուց տղից, ասեց.— Էկավ, էդա լե ուր նշան է, փաթեցի զծամեր վըր ձեռացս, պառկա քնա, ես օր կքնեմ, կէլնի կկտրե ու կէրթա։

Խահվաչին տեսավ, սաչբաղու թելն էր, ավաթ ուր առած սաչլուներն է, ասեց՝ «Ցա իմ կնիկն է, յա իմ քուրն է»։

Էկավ տուն, տեսավ օր թելներ գլուխ ուրանց չէ, հերսոտավ։ Ասեց.— Ջանըմ, ես ծամու թել առա ձրզիկ, օր դնեք գլուխ ձի, էդ ի՞նչ ադաթ է, ինչ օր առնեմ, կտանեք խընտրխորեք, վերցուք պահեք։

Կնիկն ասեց.—Ջանըմ, էդա գահ ծամուութելի վա՞խտ է, վառենք զթունդիր, հ'իգանք կդնենք։

Հերսոտավ, հ'ելան բերին դրին, տղեն տեսավ, ասեց. «Նը իմ քուրըն է, նը իմ կնիկն է»։

Ախիչկն էլ չգնաց, ախչկա բան բուսավ, քանի գնաց փորբերնավ, օրերու վրեն էր, օր պառկեր։ Տալն ասեց ախբըրկան.—Իմա՞լ կէղնի, իմ փոր բերներ է, էղեր իմ պառկելու ու իմ ախբեր լե օր իրեք հեղ կիգա, կիշքե զիս ու կէրթա, վաղ օր տեսավ զիմ փոր բերնավ, ես ի՞նչ ջուհաբ իտամ։

Ախբըրկին ասեց.— Դու անհոգ էղի, ես կգտնամ զէնդոր ճար։

Ախբըրկա հեր թուղթ էնող էր, կանչեց զհեր սորվեցուց, ասեց.— Հանդե իմ տալ հիվանդ պառկուկ է ջըլերով, զքզի կկանչեմ, հ'իգաս

թուղթ իշքես, կասիս. «Հընդե քառսուն օր ուր ախբեր տուն օր չէկավ՝ կսաղնա, օր էկավ՝ կմեռնի»։

Բերեց ձեռքըմ յորղան-դոշակ թալեց ու զտալ պառկեցուց։ Հ՚իրկուն օր էկավ իրիկ, տեսավ, ասեց.— Խեր էղնի, իմ քուրն հ՚ո՞ւրին է պառկի։

Կնիկն ասեց.— Հիվանդ է, կանչենք զիմ հեր, հ՚իգա թուղթըմ իշքե։

Չէ՞ հոր սորվեցուցեր էր. կանչեց բերեց, իշքեց, ասեց. «Էդի ախբոր մարախեն է էղի, պետք է էդոր ախբեր քառսուն օր տուն չի դա ու էդոր հ՚երես չէլնի, օր սաղնա, օր հ՚իգա, հ՚ելնի ու քուր տեսնա, մեկ դարդ կէղնի հազար, կմեռնի»։ Ախբեր էլ տուն չէկավ, խեղճ ու կրակ կուճուրավ ուր խահվի մեկ քունճ, մնաց։

Քառսուն օրն օր լըմընցավ, քուր պառկավ, տղե մը էղավ։

Տղեն օր էղավ, կողվընեռով վարդ կծախեն։ Կանչեց ախբըրկին զվարդ ծախողն, բերեց զտղեն դրեց վարդի տակ ու վարդ լցեց վրեն, ասեց. «Էդա լե քու վարդերու գին, կառնես կէրթաս ֆըլան խահվախանեն, կասես՝ վարդ կծախեմ, վարդ կծախեմ, հանդե էնդոնք զքզիկ կկանչեն ներս, օր կդնես զվարդի կողով գետին, էլ մը մնա հ՚ոնի, դիր ու փախիր, հ՚ելիր դուրս»։

Էդ տղեն լե հոդ էր, զթամալ օր թալեր էր, էլ չգնաց, կիշքեր, օր զուր մարդ գտներ։

Վարդ ծախող, ախբըրկա ասածի պես, բերեց զխոնտախ դրեց կողվի տակ, վարդ լցեց վրեն ու առավ գնաց էդ խահվախանի դռնեն ճի մը էրեց ներս, ասեց՝ «Վարդ կծախեմ, վարդ կծախեմ»։ Օր ասեց վարդ կծախեմ, տղեն ու խահվաճին կանչին ներս, վարդ ծախող դրեց զկողով գետին ու բըլընգըրկի փախավ։ Էնդոնք լե ինչ օր տեսնեն, կառնեն ճամբեն տուն ախբըրկան՝ ու տալոջ։

Վարդ ծախողն օր զկողով դրեց գետին, խըժոցըմ ընկավ, գիցան օր կողովի մեջեն է։ Հանին տեսան օր հուրնի-հրեղեն տղե մը դրուկ է վարդերու տակ, հանեցին ու առան էկան տուն։

Ախբըրկին տալոջ խրատեր էր.— Հանդե կառնեն կիգան, կասեն՝ առեք պահեք։ Ես կասեմ՝ մզիկ կթան չկա, ես ճըժմեր չեմ, քու քուր լե ախչիկ, իմա՞լ պահենք, չէղնի քու ճիկար ցավա վրեն, զքզիկ բիրդան թալիս։

Խահվաճին առավ զխոնտախն ու էկավ տուն։ Ասեց.— Կնիկ, ալուքեֆյաթ հ՚էսօր հըմլա փորցանքըմ էկավ վըր մզիկ. նստուկ ենք խահվախանեն, տեսանք վարդճի մը վարդ կծախեր, կանչինք ներս, օր փունճըմ էրկու վարդ առնենք, վարդճին դրեց զկողով գետին ու բըլընգըրկի փախավ դուրս, ասինք՝ զայիր կէրթա ու կիգա։ Օր դրեց գետին, կողվի մե-

ջեն ճժու մը ձեն էկավ. բացինք, էդա էրեխեն դրուկ էր տակ, վարդ լե լըցուկ էր վրեն։ Մեղք է, անլեզու հայվան, առ պահե։

Կնիկ զարկեց զինք չալափալեն, ասեց.— Ընծիկ ծիծ չկա, քու քուր լե ազապ ախչիկ, էդի վի՞ր բիճն է, առար էկար, ես ինչո՞վ պահիմ։

Ասեց.—Կնիկ, ասսու սեր էղնի, չէղավ՝ կովըմ կառնեմ, պահե։

Հ՝ելավ գնաց շուկեն, առավ կովըմ, էկավ։ Ձկով կկթեն, կուտեն, ախչիկ կպահեր։ Պահեցին զտղեն, էղավ էրկու տարեկան, լեզուն փըրցավ։ Տղեն շըմփլուկ է խահվախանի քունճ, էղեր է խահվաճու հետ ախբըրդիր։

Էն մեկ օր խահվաճու կնիկն ասեց իրկան.— Դու իմա՞լ մարդ իս, կասիս՝ ընծիկ ախբըրդիր կա ու օրըմ դավաթ չէնիս, բերիս քու տուն, դու լե մարդ իս, հեղըմ կանչե, բի, տեսնանք քու ախբըրդիր իմա՞լ մարդըմ է։

Կանչեց զտղեն, առավ էկավ տուն, թե էրեց է, թե մոլլա է, զէնդոնք լե բերեց։ Օր էկան տուն, քեռեկին սովրցուց զտղեն, ասեց. «Գնա հանելուկըմ ասե, բի վըր քու հորն ու մոր, ասե՝ թե օր իմ քեռին հանեց, ես իմ քեռուս տղեն իմ, թե օր չհանեց, էդա մարդ հանեց (ախբըրդիր ցույց կուտա), քեռին զուր քուր իտա իմ հորդ։

Տղեն կէրթա կանի ջաղամաթի մեշ, կասե.— Ջաղամաթ, դուք շհատ էղնեք, ես հանելուկըմ կասեմ, օր իմ քեռին հանեց, ես իմ քեռու տղեն իմ, օր չհանեց՝ ես էդա մարդու տղեն իմ։

Ջաղամաթ ասին.— Հա, մենք շհատ ենք։

Տղեն ասեց զուր հանելուկ, քեռին չկառցավ հանեց, քեռու ախբըրդիր հանեց։ Օր հանեց, նոր հասկըցան. տղեն էդ մարդու տղեն է ու էն գիշեր օր տղի խեչ գացեր է, քուրն է էղի։

Բերին թաժա բռնին զհարսնիկ, էնդոնք հասան ուրանց մուրազին, դու լե հասնես քու մուրազին։

Աստծուց հ՝իջավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։